Հավելված
ՀՀ կառավարության 2011 թ.
օգոստոսի 25-ի նիստի N 33
արձանագրային որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Կատարման ժամկետը	ֆինանսական գնահատականը
1.	Շարունակականորեն կատարելագործել ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական սպասարկման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը և նորմատիվային փաստաթղթերը	Համապատասխանեցնել կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական սպասարկման մակարդակը միջազգային չափանիշներին	ՀՀ արդարադատության նախարարություն	Մշտապես	ֆինանսական ներդրում չի պահանջվում:
2.	ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կատարել կառուցվածքային փոփոխություն՝ թոքախտաբանական բաժանմունքը դարձնելով թոքախտաբանական բաժին՝ բաժնի կազմում ստեղծել դեղորայքակայուն տուբերկուլյոզի բաժանմունք	Ռեգուլյար և բազմադեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների սեկտորիզացիայի ապահովում	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն	2011 թ. 4-րդ եռամսյակ	ֆինանսական ներդրում չի պահանջվում:
3.	Ավարտել բժշկական ծառայությունների որակի գնահատման և վերահսկման չափորոշիչների մշակումը և այն ներդնել քրեակատարողական համակարգում:	Բարելավել բժշկական ստորաբաժանումներում իրականացվող գերատեսչական վերահսկողության մեխանիզմները	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն	2011 թ. 4-րդ եռամսյակ	ֆինանսական ներդրում չի պահանջվում
4.	Համագործակցել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ ապահովելով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգում բժշկական առողջարարական ծրագրերի շարունակականությունը	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և թմրամոլության դեմ ուղղված պայքարի ակտիվացում	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն	Յուրաքանչյուր տարի	ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ